ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԴԻԱՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Երևան 2018

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)
Մ 831

**Հրատարակության է երաշխավորել**
**ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի խորհուրդը**

Խմբագիր՝ Ժ. Քալանթարյան
Գրախոսներ՝ Ն. Ադալյան, Ս. Գրիգորյան

Մնացականյան Դ.
Մ 831 Հայկական պոստմոդեռնիզմի խաչուղիներում/ Դ. Մնացականյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2018.- 242 էջ:

*Մենագրությունը նվիրված է ժամանակակից հայ գրականության մեջ իր որոշակի դրսևորումն ունեցող պոստմոդեռնիզմի առկայությանը, նրա օրինաչափությունների բացահայտմանը և քննադատության արձագանքներին: Հետազոտությունը կատարվել է լայնածավալ գրական նյութի հիման վրա, ընդգրկվել են գրեթե քառորդ դարի հայ գրականության բոլոր սեռերն իրենց առավել ցայտուն ներկայացուցիչներով:*

*Նվիրում եմ հայրիկիս հիշատակին:*

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-9939-75-215-0

© Դիանա Մնացականյան

* * *

Այս աշխատությունն ընդգրկում է նշված խնդրի լայն շրջանակ և ունի գրականագիտական արժեք: Հեղինակը բաջատեղյակ է գեղարվեստական գրականության իրողություններին և դրանց արձագանքներին քննադատության ասպարեզում: Մենագրության արժանիքներն ակնհայտ են. վերլուծական միտք, գրական չափանիշների պահպանություն, շարադրանքի օրինակելի լեզու, առանձին գրողների և գրական ամբողջական երևույթների գնահատանքներ, գրապատմական ու տեսական հարցերի խորքային վերլուծություններ և այլն: Աշխատությունը մեզանում առաջին անգամ ամբողջականորեն քննարկում է պոստմոդեռնիզմի բավականին բարդ հարցերը և մեծ մասամբ տալիս է համոզիչ պատասխաններ:

**Նորայր Ադալյան**
*բանասիրական գիտությունների դոկտոր*

* * *

Աշխատանքն աչքի է ընկնում առաջադրված խնդիրների և քննվող նյութի լավ իմացությամբ: «Ներածության» մեջ հարցի պատմությունը հստակեցնելուց հետո հեղինակը չորս ծավալուն, բայց համաչափ գլուխներում ներկայացնում է արդի գրականագիտության ամենաբարդ և հեղհեղուկ երևույթներից մեկի՝ պոստմոդեռնիզմի պատմական և տեսական հիմքերը, նրա փիլիսոփայական համակարգի ձևավորումը, հասարակական և գեղագիտական նախադրյալները հայ իրականության մեջ:

Տեսական պատշաճ պատրաստվածությունը, հայերեն, ռուսերեն և անգլերեն մասնագիտական գրականության հիմ-

նավոր վերլուծությունը Դ. Մնացականյանին թույլ են տալիս նկատել և արձանագրել «ուշացած» մոդեռնիզմի դրսևորումները ինչպես ժամանակակից հայ պոեզիայում, այնպես էլ արձակում և դրամատուրգիայում: Միանգամայն համոզիչ և փաստարկված են ներկայացվում արդի հայ գրականության պոստմոդեռնիստական հակումները, իրականի և անիրականի միաձուլումը, միֆի իմաստային նոր կիրառությունը, ինտերտեքստայնության դրսևորումները:

Վերջին երեք տասնամյակների հայաստանյան գրականության բնագրերի և գրական պրոցեսի հիմնավոր իմացությունը թույլ է տալիս հետազոտողին նկատել թե՛ գրական զարգացման ընդհանուր օրինաչափությունները, թե՛ առանձին հեղինակների անհատականության դրսևորումները: Գնահատելի է նաև հայ գրականության երևույթների զուգադրումը համաշխարհային գրականության հարակից դրսևորումների հետ:

Դիանա Մնացականյանի աշխատանքն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն: Մասնավորապես այն կարող է իր նպաստը բերել ժամանակակից հայ գրականության մի քանի գլխավոր դեմքերի՝ Հովհ. Գրիգորյանի, Լ. Խեչոյանի, Ն. Ադալյանի, Գ. Խանջյանի ստեղծագործությունների հետազոտությանը:

**Սեյրան Գրիգորյան**

*բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմության մեջ վերջին տարիների, կարելի է ասել, ամենից շրջադարձային իրադարձությունից՝ Հայաստանի Երրորդ հանրապետության հաստատումից հետո արդեն 27 տարի է անցել, և մեզ առաջին հերթին հետաքրքրում են այս ժամանակամիջոցում գրականության բնագավառում կատարված որակական փոփոխությունները, դրանց հասարակական, փիլիսոփայական ու մշակութաբանական հիմքերը: Գրական նոր սերունդը, ինչպես նաև ընթացքի մեջ գտնվողները, հայտնվեցին դեռևս իրենց ազդեցությունը պահած կարծրատիպերի և, գոնե մեզ համար, նոր տեսությունների ու մեթոդների հատման խաչմերուկում: Զգալի չափով ավանդականը պահպանելով հանդերձ՝ 1990-ականների ստեղծագործողներն ազատորեն իրենց հայացքն ուղղեցին նաև դեպի համաշխարհային արվեստն ու մշակույթը, ինչը բնականաբար ունեցավ իր յուրօրինակ ազդեցությունը:

1960-ական թվականներից ի վեր համաշխարհային արվեստում լայն առումով սկիզբ առավ մի նոր շարժում, որն ընդունված է անվանել պոստմոդեռնիզմ: Մեր օրերում պոստմոդեռնիզմն առավելապես դիտարկվում է որպես համաշխարհային մշակութաբանական հոսանք՝ չնայած այդ հարցի շուրջ տեսաբանները միակարծիք չեն: Պոստմոդեռնիզմն ունի տարբեր սահմանումներ, այն է՝ նոր գեղարվեստական ոճ, գեղարվեստական նոր ուղղություն, մշակութային գիտակցության ձև և այլն: Լայն առումով պոստմոդեռնիզմը 20-րդ դարի երկրորդ կեսի մշակույթի ընդհանուր անվանումն է, որի հիմքում ընկած է աշխարհն իբրև

## Բովանդակություն

Ներածություն .....5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Պոստմոդեռնիզմի պատմական և տեսական հիմքերը .....10
ա) Պոստմոդեռնիզմի փիլիսոփայական համակարգի ձևավորումը .....12
բ) Մոդեռնիզմից պոստմոդեռնիզմ .....19
գ)Պոստմոդեռնիզմի գրականության հասարակական և գեղագիտական նախադրյալները հայ իրականության մեջ.....36

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

«Ուշացած» մոդեռնիզմի պոեզիան պոստմոդեռնիզմի շրջանում ..... 45
ա) Իրականի և անիրականի միաձուլումը իբրև աշխարհի քաոսայնության դրսևորում..... 47
բ) Միֆի իմաստային նոր կիրառությունը ..... 65
գ) Ինտերտեքստայնության պոստմոդեռնիստական առանձնահատկությունները .....78

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

Արձակը տեքստի քայքայման, հեգնանքի ու համադրականության համատեքստում..... 87
ա) Ապոկալիպսիս Ն. Ադալյանի մեծ քաղաքում: (Տեքստից դեպի հիպերտեքստայնություն) ..... 97
բ) Պոստմոդեռնիստական կոդավորում Լ. Խեչոյանի արձակում .....122
գ) Գ. Խանջյանի հերոսի անավարտ պտույտը՝ շարժասանդուղքից մինչև գնացք.....144